9851

655
P-64

1895

# ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

## 1894

ԹՈՒԻ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

# ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

---

*XV-երորդ տարեշրջան*

*ԹԻՖԼԻՍ*

Տպարան Մ. Շարաձէի || Типогр. М. Шарадзе и К°.

1895

655
Թ-64

1004
15725

ՀԱԽՍՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

370
Հ292-Տե

ՌԲ 2002

2011

17316

Дозволено цензурою. Тифлисъ, 15 Апрѣля 1895 года.

655
Թ-64
Կր.

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ § 31

370
ՁՁԹՁ-ՏԾ

Տարեկան Ընդհանուր Ժողովում՝

Ա, Վարչութեան քարտուղարը ներկայացնում է ընդհանուր հաշիւ Ընկերութեան լրացած տարուայ աշխատութեանց կայքի և դրութեան մասին.

Բ, Ընտրւում են պաշտօնատար անձինք.

Գ, Հաստատւում է Վարչութեան ծախուց նախահաշիւը և

Դ, Ընտրւում են պատւոյ անդամներ։

---

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*Ընդհանուր ժողովի որոշումները.—Ընկերութեան կազմութիւնը:—I Վարչութեան գործունէութիւնը. գրքերի հրատարակութիւնը. գրքերի վաճառումը. ձրի ուղարկուած գրքերի ցուցակը. դիւանի գործունէութիւնը. պաշտօնական հաշուետուութիւնը. Ընկերութեան տասնեւհինգ տարուայ գործունէութեան համառօտ հաշիւը:—1894 թուի դրամական հաշիւը. Ընկերութեան հրատարակութիւնների եւ վաճառուած ու պահեստում գտնուող գրքերի ցուցակը: —II Խմբագրական Մասնաժողովի գործունէութիւնը. ընդունուած աշխատութիւնների եւ տպագրութեան համար նշանակուած գրքերի ցուցակը:—Ընկերութեան անդամների մանրամասն ցուցակը:—Նախահաշիւ 1895 թուի համար:—*

---

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1894 թուի մարտի 26-ին կայացաւ Ընկերութեան Ընդհանուր ժողովը, որ ի միջի այլոց կայացրեց հետեւեալ որոշումները.

1, Ընդհանուր ժողովը, նորից քննութեան առնելով Ընկերութեան գումարների բնաւորութիւնը, որոշում է, որ Ընկերութիւնը չունի ոչ մի անձեռնմխելի գումար, այլ կարող է ունենալ միայն պահեստի գումար, որի քանակութիւնը Վարչութիւնը առաջարկում է Ընդհանուր ժողովին ի հաստատութիւն:

2, Իրաւունք է տրւում Վարչութեան ունենալ գաւառներում աշխատակից անդամների և գրավաճառանոցների մօտ ապառիկ մինչև 12,000 րուբլու արժողութեան գրքեր:

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Մինչև 1894 թուի մարտի 26-ի Ընդհանուր ժողովը Ընկերութեան Վարչութիւնը և Խմբագրական Մասնաժողովը գործում էին հին կազմութեամբ: Այդ ժողովից յետոյ նոքա ունէին հետեւեալ կազմութիւնը.

### Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Ի Ւ Ն

| | |
|---|---|
| *Նախագահ* | Քալանթար Ալէքսանդր |
| *Փոխ նախագահ* | Լօրիս Մելիքեան բժ. Յովհաննէս |
| *Վարչութեան անդամներ* | Յարութիւնեան Սամսոն |
| | Խաչատրեան Խաչատուր |
| *Գանձապահ* | Տէր Գրիգորեան Արշակ |
| *Դրապահ* | Շահումեան Գէորգ |
| *Քարտուղար* | Ամիրխանեան Յովսէփ |

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

*Անդամներ*
- Առաքելեան Համբարձում
- Բալաղեան Սամուէլ
- Բարխուդարեան Արշակ
- Լունկեվիչ Վալերեան
- Մալխասեան Ստեփան
- Յակոբեան օր. Վարդուհի
- Քօչարեան Յակոբ

Ընկերութիւնը 1894 թուին ունէր 365 անդամ, որոնցից 13 մշտական և 352 իսկական և բացի այդ 51 աշխատակից անդամ։ Մշտական անդամներից 4-ը աւելացել են հաշուետարուայ ընթացքում։ Բոլոր անդամների անունները տպուած են այս տեղեկագրի մէջ։ Այստեղ բաւական ենք համարում առաջ բերել միայն իսկական անդամների գումարաթիւը զանազան քաղաքներում և գիւղերում։ Ընկերութիւնը ունեցել է 1894 թուին իսկական անդամներ.

| | | | |
|---|---|---|---|
| Թիֆլիս | 116 | Գօրիս | 2 |
| Ագուլիս | 5 | Դերբենդ | 1 |
| Ազա (գիւղ) | 1 | Դիլիջան | 10 |
| Ալէքսանդրիա | 4 | Դուշէթ | 1 |
| Ալէքսանդրօպօլ | 2 | Երևան | 24 |
| Ախալքալաք | 1 | Եվլախ | 2 |
| Աղստաֆա | 7 | Եւպատորիա | 1 |
| Արդուին | 1 | Զաքաթալա | 1 |
| Բագու | 38 | Էջմիածին | 3 |
| Բաթում | 7 | Լագօդաղ | 6 |
| Բելգրադ | 1 | Խանքենդի | 1 |
| Գիւքկում | 3 | Խարկով | 1 |



| | | | |
|---|---|---|---|
| Կաղզուան | 2 | Շուլաւէր | 2 |
| Կարս | 3 | Շուշի | 21 |
| Հաջամէթ | 2 | Պեխ (գիւղ) | 1 |
| Հին-Ղրիմ | 1 | Պետերբուրգ | 1 |
| Հին-Նախիջևան | 4 | Սղնախ | 4 |
| Ղազախ | 1 | Սուխում | 3 |
| Ղզլար | 25 | Ստաւրօպօլ | 4 |
| Մեղրի | 5 | Վաղարշապատ | 5 |
| Մերվ | 1 | Վարշավա | 6 |
| Մրգիկան | 1 | Վարցիխ (գիւղ) | 1 |
| Մօսկվա | 10 | Ցարսկիե-Կօլօդցի | 2 |
| Նոր Բայազէթ | 2 | Քութայիս | 2 |
| Նուխի | 2 | Օդեսսա | 1 |
| Շամախի | 1 | | |

## I ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Վարչութիւնը 1894 տարուայ ընթացքում ունեցել է 47 վարչական նիստ, որոնցում զբաղուել է Ընկերութեան վարչական գործերով։ Նիստերից բացակայ են եղել Վարչութեան անդամները հետևեալ քանակութեամբ. Յ. Լօրիս Մելիքեան 11, Ս. Յարութիւնեան 8, Խ. Խաչատրեան 15, Ա. Տէր-Գրիգորեան 2, Գ. Շահումեան 17 և Յ. Ամիրխանեան 8 անգամ, հին կազմութիւնից իշխ. տիկին Մ. Թումանեան 2 և Յ. Ստեփանեան 1 անգամ։ Բացակայութեան պատճառը եղել է յաճախ Վարչութեան այս կամ այն անդամի քաղաքից հեռանալը իրանց գործերով։

ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ. 1894 տարուայ ընթացքում Ընկերութիւնը տպել է 12 գիրք, որոնց անունները հետևեալներն են.

1 *Մանուկների հոգատարութիւնը*, Պօկրօվսկու, թարգ. բժ. Թ. Զ.

2 *Մուկուչի հաւիկը*, Պ. Նեգվանովի.

3 *Երկու հէքեաթ*, Կարմէն Սիլվայի.

4 *Կովկասի գերին*, Լ. Տօլստոյ, թարգ. Պ. Պ.

5 *Անմոռնի բաղիկը*, Անդերսէնի.

6 *Վէպիկներ*, Շիրվանզադէի.

7 *Դարվինիզմ*, Ս. Բալադեանի.

8 *Պետրոս Դուրեան*, Արշակ Չօպանեանի.

9 *Շիլիօնի կալանաւորը*, Մօրից Հարտմանի, թարգ. Կ. Գիւլնազարեանի.

10 *Համլէտ*, Շէկսպիրի, թարգ. անգլ. Յովհ. խան Մասեհեանի։

11 *Քննական պատմութիւն Հայոց*, I Նախնական ժամանակ, Ա. Մ. Գարագաշեանի.

12 Նոյն II. Արշակունիք ի ժամանակի հեթանոսութեան։

Պ. Ա. Մ. Գարագաշեանի Քննական պատմութեան երրորդ և չորրորդ մասերը մամուլի տակ են և լոյս կը տեսնեն 1895 թուի ընթացքում։

Վարչութիւնը աչքի առաջ ունենալով, որ Ս. Պալասանեանի Ընկերութեանս հրատարակած Հայոց Պատմութիւնը արդէն սպառուել է, իսկ այդ գրքի վերաբերութեամբ պահանջը մեծ է թէ թեմական դպրոցների աշակերտների և թէ ընթերցող հասարակութեան կողմից, համաձայնութիւն կայացրեց հանգուցեալ Ս. Պալասանեանի ժառանգների հետ և որոշեց այդ գիրքը յանձնել երկրորդ տպագրութեան։ Առաջին անգամ 1890 թուին տպագրուած էր 2400 օրինակ. իսկ այժմ տպագրւում է 3600 օրինակ։

Ընկերութեան վերջին տարուայ հրատարակութիւններից սպառուած է նաև Յ. Պարոնեանի «Մեծապատիւ Մուրացկանները», որ տպագրուած էր 1891 թուին 1200 օրինակ։

Ընկերութիւնը իւր հիմնուելու օրից տասնևհինգ տարուայ ընթացքում հրատարակել է ընդ ամենը 85 կտոր գիրք բացի տարեկան Տեղեկագիրներից, որոնք վերջին տարիները տպագրւում էին մանրամասնութեամբ։ Վերջին Տեղեկագիրը Ընկերութեան 1893 թուի գործունէութեան մասին տպագրուած էր 800 օրինակ, որոնք սպառուել են տարուայ ընթացքում։



ԳՐՔԵՐԻ ՎԱՃԱՌՈՒՄԸ. Ընկերութեան գրքերը բացի Թիֆլիսից վաճառւում էին զանազան քաղաքներում և գիւղերում թէ գրավաճառների և թէ Ընկերութեան աշխատակից անդամների միջոցով, ինչպէս այդ երևում է այստեղ զետեղած ցուցակից։ Ընկերութեան գրքերը վաճառւում էին Թիֆլիսում՝ Ընկերութեան գրասենեակում, Կենտրօնական գրավաճառանոցում և Խիդդեկելի գրավաճառանոցում։ Վարչութիւնը մի առանձին յայտարարութեամբ, որ ցրուեց լրագիրների հետ, յայտնեց, որ Ընկերութիւնը գաւառ ուղարկուած գրքերի ճանապարհածախքը վերցնում է իւր վերայ և զեղչ անում է հետևեալ կերպով՝ գրավաճառանոցներին 20°/₀, կանխիկ կամ վերադիր վճարով գնողներին 25°/₀, ուսումնարաններին, գիւղական և էժանագին գրադարաններին 30°/₀։

*Գրավաճառանոցների եւ աշխատակից անդամների մօտ եղած գրքերի հաշիւը առ մէկն յունուարի 1895 թուի:*

| Քաղաքի անունը | Ուղարկուած է Ր. | Ուղարկուած է Կ. | Ստացուած է Ր. | Ստացուած է Կ. | Մնում է Ր. | Մնում է Կ. |
|---|---|---|---|---|---|---|
| Ալէքսանդրօպօլ . | 260 | 71 | 136 | 71 | 124 | — |
| Ախալցխա . . | 52 | — | 4 | 74 | 47 | 26 |
| Ախալքալաք . | 37 | 15 | 27 | — | 10 | 15 |
| Աղստաֆա . . | 19 | — | 2 | — | 17 | — |
| Արմաւիր . . | 19 | — | — | — | 19 | — |
| Բաթում . . | 167 | 60 | 32 | 75 | 134 | 85 |
| Բագու . . | 676 | 30 | 54 | 74 | 621 | 86 |
| Բուլղարիա . . | 20 | 50 | — | — | 20 | 50 |
| Գանձակ . . | 76 | — | — | — | 76 | — |
| Գօրիս . . | 93 | 95 | 52 | — | 41 | 95 |
| Դերբենդ . . | 35 | — | — | — | 35 | — |
| Դիլիջան . . | 77 | 75 | — | — | 77 | 75 |
| Երևան . . | 424 | 45 | 169 | — | 255 | 45 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Եվլախ . . | 26 | 95 | 9 | 45 | 17 | 50 |
| Էջմիած. և Ագուլիս | 183 | 58 | — | — | 183 | 58 |
| Էջմիածին . . | 154 | 55 | — | — | 154 | 55 |
| Թէլաւ . . | 24 | — | — | — | 24 | — |
| Թավրիզ . . | 146 | 69 | — | — | 148 | 69 |
| Նոր-Բայազէթ . | 27 | 50 | — | — | 27 | 50 |
| Նուխի . . | 64 | 65 | 17 | — | 47 | 65 |
| Թէոդոսիա . . | 15 | — | — | — | 15 | — |
| Շամախի . . | 30 | 45 | 4 | 05 | 26 | 40 |
| Շուշի . . | 260 | 30 | 95 | 11 | 165 | 19 |
| Ղազախ . . | 17 | 20 | — | — | 17 | 20 |
| Ղզլար . . | 318 | 90 | 165 | 50 | 153 | 40 |
| Ղարասու-Բազար . | 16 | — | — | — | 16 | — |
| Ղարս . . | 60 | 50 | 45 | — | 15 | 50 |
| Մելիտօպօլ . | 15 | — | — | — | 15 | — |
| Սղնախ . . | 17 | 20 | — | — | 17 | 20 |
| Սիմֆերօպօլ . | 15 | — | — | — | — | — |
| Մօսկվա . . | 20 | 60 | 15 | 70 | 4 | 90 |
| Ագուլիս . . | 84 | 50 | 13 | 20 | 71 | 30 |
| Հին-Նախիջևան . | 211 | 45 | 60 | — | 151 | 45 |
| Ագա . . | 34 | — | — | — | 34 | — |
| Սուխում . . | 70 | 34 | — | — | 74 | 34 |
| Օդեսսա . . | 27 | 50 | — | — | 27 | 50 |
| Թիֆլիս . . | 3692 | 65 | 1282 | 22 | 2410 | 50 |
| Գումարը . | 7495 | 99 | 2185 | 87 | 5310 | 05 |

Վարչութիւնը յաճախ դիմումներ է արել թէ տպագրած շրջաբերականներով և թէ մասնաւոր նամակներով այն անձանց, որոնց մօտ գտնւում են Ընկերութեան գրքերը և նոցա մեծ մասից ստացել է լիակատար հաշիւները, սակայն մի փոքր մասը Թերի հաշիւ է ներկայացրել կամ դեռ չէ ուղարկել հաշիւը։

Վարչութիւնը ուշք է դարձրել այն բանի վերայ, որ այս կամ այն քաղաքում և գիւղում անվաճառ մնացած գըրքերը վերադարձուեն Ընկերութեան գրասենեակը, որպէս զի



կարելի լինի այդ գրքերը ուղարկել այն տեղերը, ուր պահանջ կայ նրանց վերաբերութեամբ։

Այստեղ ներկայացրած ցուցակից երևում է, որ 1894 Թուի հաշւում՝ առ 1-ն յունուարի 1895 Թուի՝ գրավաճառների և աշխատակից անդամների մօտ գտնւում էին 7495 ըուբլու և 99 կոպէկի արժողութեան գրքեր, որոնցից 2185 ըուբլու և 87 կոպ. գրքեր սպառուած են և այժմ մնացել է նրանց մօտ 5310 ր. 5 կոպ. արժողութեան գիրք։ Սպառուած 2185 ր. 87 կ. արժողութեան գրքերից Ընկերութեան դրամարկղը մտել է 1560 ըուբլի 7 կոպէկ։ Մնացած գումարը ներկայացնում է այն գրքերի արժողութիւնը, որ բաժանուած են Ընկերութեան իսկական անդամներին և այն զեղչի քանակութիւնը, որ արուած է գրքեր գնողներին։

---

Վարչութեան գործունէութեան վերաբերութեամբ նշանակենք և հետևեալ կէտերը.

1) Նոր ընտրուած քարտուղարը և գանձապահը ստացել են հին պաշտօնատարներից Ընկերութեան բոլոր գործերը և դրամարկղը։

2) Կարգի է բերուած գրասենեակի գործունէութիւնը և միջոցներ են ձեռք առնուած աւելի սերտ և կենդանի յարաբերութիւններ հաստատել գաւառների հետ, գրաւելով աշխատակից և իսկական անդամներ և շուտափոյթ կատարելով գաւառից տուած պատուէրները գրքերի մասին։ Գրասենեակում աւելացրած է դարակների քանակութիւնը, տպագրուած է առանձին յայտարարութիւն Ընկերութեան գրքերի ցուցակով և նրանց գնելու պայմաններով։

3) Խնդիր է յարուցուած Ընկերութեան գրքերի ապահովագրական արժէգումարը բարձրացնելու մասին։ Ընկերութեան գրքերը ապահովացրած են մօտ հինգ տարի սրանից առաջ Ռուսական Ապահովագրական Ընկերութեան մէջ (Рос-

сійское общество страхованія отъ огня, учрежд. въ 1827 г.) հինգ հազար րուբլով. մինչդեռ այժմ գրքերի արժէքը շատ մեծացել է և հարկ է զգացւում ապահովագրական գումարը գոնէ կրկնապատկել։

4) Ընկերութիւնը տուել է մի պարերեկոյթ Կովկասեան Բարեգործական Ընկերութեան հետ միասին, որից գոյացել է զուտ արդիւնք 1200 ր., այդ արդիւնքից Հրատարակչական Ընկերութիւնը ստացել է կէսը, 600 ր.։ Պարերեկոյթը Վարչութիւնից անկախ պատճառներով անկարելի եղաւ աջողեցնել 1894 թուին՝ հաշուետարում՝ և առանձին վարչական օրագրութեամբ յետաձգուեց մինչև փետրուար 1895 թուի։ Պարերեկոյթը տեղի ունեցաւ փետրուարի 11-ին գործակցութեամբ իշխանուհիների Մ. Դուրիէլի, Ս. Դադեան, Մ. Թումանեան, տիկինների Ս. Ծովեանեան և Ն. Թամամշեան, որոնց Վարչութիւնը յայտնում է իւր շնորհակալութիւնը։

5) Վարչութիւնը՝ քննելով մի քանի հաստատութիւնների կողմից ստացած խնդիրքները՝ Ընկերութեան գրքերից նոցա նուիրելու, կամ մեծ զիջողութեամբ վաճառելու մասին, որոշել է նուիրել Ընկերութեան հրատարակութիւնները՝ Ագայի գիւղական-ծխական դպրոցի, Սևանայ վանքի միաբանութեան, Թավրիզի Ընթերցասիրաց Ընկերութեան՝ գրադարաններին, Խանքեանդի հայոց ծխական դպրոցին (մանկական գրքերից) Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան (երկ երկու օրինակ), նոյն Ընկերութեան Նուխուայ ճիւղի գրադարանին 50% զեղչով, Ղզլարի հասարակական գրադարանին 40%։ Բացի այդ շարունակել է ուղարկել այն հաստատութիւններին, որոնց համար որոշումներ են կայացած եղել նախորդ տարիներում։

6) Վարչութիւնը ուղարկել է մի ցաւակցական նամակ վրաց բելլետրիստ Կազբէկի թաղման կարգադրիչ Մասնաժողովին և մի ցաւակցական հեռագիր նշանաւոր երաժիշտ Անտոն Ռուբինշտէյնի այրուն։ Վարչութիւնը պարտք է համարում յիշատակել, որ Ընկերութիւնը տպագրել է Կազբէկի խոշոր հեղինակութիւններից մէկը, այն է Էլգուջան, իսկ Ա. Ռուբինշտէյնից Ընկերութիւնս ստացել է հազար րուբլի գումար, որ յատկացրել էր հանգուցեալը Ընկերութեան՝ իւր մի երաժշտական երեկոյթի հասոյթից։



7) Վարչութիւնը պարբերաբար և ըստ պահանջման կառավարչական անձանց և հաստատութիւնների՝ ներկայացրել է հետևեալ հաշիւները.

ա, Թիֆլիսի պ. ոստիկանապետին՝ երեք-երեք օրինակ ամսահաշիւ Ընկերութեան դրամական ելումուտքի մասին առանձին գծագրած ձևով.

բ, Նոյնը ամբողջացրած մի տարուայ ելումուտքի մասին։

գ, Թիֆլիսի պ. նահանգապետին՝ տարեկան հաշիւ Ընկերութեան գործունէութեան մասին, ինչպէս թելադրում է կանոնադրութեան § 37-ը.

դ. Թիֆլիսի ոստիկանապետին՝ նրա առանձին պահանջով տեղեկութիւն Ընկերութեան կանոնադրութեան և գործունէութեան մասին։

Բացի այդ Վարչութիւնը ստացել է Թիֆլիսի պ. ոստիկանապետի միջոցով՝ ընդհանրապէս բոլոր տեղական լեզուներով գրքեր հրատարակող Ընկերութիւններին վերաբերեալ՝ Թիֆլիսի նահանգապետի հետևեալ կարգադրութիւնը. պարտաւորեցնել այդ տեսակ ընկերութիւնները, որ տեղական լեզուներով տպագրուող նրանց հաշիւներին, յայտարարութիւններին և ցուցակներին և այլն կցուի և սոցա ռուսական բովանդակութիւնը։

---

Վարչութիւնը կարևոր է համարում նորից յիշատակել, որ Ընկերութեան դրամարկղում գտնւում է մի յատուկ գումար, որ ուղարկել է Ընկերութեանը հանգուցեալ Պետրոս Շանշեանի մահարձան շինելու Մասնաժողովը այն պայմանով, որ եթէ երեք տարուայ ընթացքում Մասնաժողովը

պատրաստ չունենալ Շանշեանի կենսագրութիւնը, որի համար յատկացրուած է այդ գումարը, միացնուի, այնուհետև, իբրև նուէր, Ընկերութեան միւս գումարներին։ Այդ գումարը, որ ընդունուելու միջոցին կազմում էր 60 ր. 40 կոպէկ, այժմ առ 1-ն յունուարի 1895 ամի դարձել է 65 ր. 20 կոպէկ։ Առաջիկայ 1895 թուին վերջանում է երեք տարուայ պայմանաժամը։

Վարչութիւնը ստացել է հարիւր րուբլի նուէր հանգուցեալ Տէր Եղիշէ Տէր-Գրիգորեանի կտակով և հարիւր րուբլի նուէր բժիշկ Յ. Լօրիս Մելիքեանից ի յիշատակ նորա հանգուցեալ հօր Զաքարեայի, որոնց համար Վարչութիւնը յայտնել է Ընկերութեան կողմից շնորհակալութիւն Տէր Եղիշէի կտակակատարներին և բժիշկ Յ. Լօրիս Մելիքեանին։

Ընկերութեան գրասենեակը ստացել է տարուայ ընթացքում հետևեալ պարբերական հրատարակութիւնները. «Մշակ», «Արձագանք», «Մուրճ», «Տարազ» և «Աղբիւր», «Кавказъ», «Новое Обозрѣніе», «Тифлисскій Листокъ» և «Кавказское Сельское Хозяйство», որոնց համար Վարչութիւնը յայտնում է հրապարակաւ իւր շնորհակալութիւնը այդ թերթերի խմբագիրներին։

Վարչութիւնը պարտք է համարում յայտնել իւր շնորհակալութիւնը աշխատակից անդամներին, որոնք օգնել են Ընկերութեան գրքերի վաճառելուն և անդամներ գտնելուն։ Բացի աշխատակից անդամներից Ընկերութեան գործունէութեան օգնել են և մասնաւոր անձինք։

Ներկայ տեղեկագրում զետեղուած է, անցեալ տարուայ օրինակով, մի աղիւսակ Ընկերութեան կազմութեան և գործունէութեան մասին նորա սկզբնաւորութիւնից (1880) մինչև յունուարի 1-ը 1895 թուի։



| | 1880 1885 | 1886 | 1887 | 1888 | 1889 | 1890 | 1891 | 1892 | 1893 | 1894 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Անդամ-թիւը խմկ. և մշ. | 503 | 28 | 14 | 18 | 113 | 88 | 113 | 359 | 313 | 365 |
| Վարչութ. նիստերի թիւը . | 25 | 2 | — | 1 | 8 | 8 | 29 | 28 | 41 | 47 |
| Խմբ. Մասնաժ., նիս. թիւը | 28 | — | — | — | 13 | 15 | 26 | 24 | 25 | 33 |
| Վարչ. և Խմ. Մաս. խառն նիստերի թիւը . . . | 44 | 7 | 7 | 3 | 5 | 14 | 1 | — | 2 | 1 |
| Ընդհանուր ժողով. թիւը. | 6 | 1 | 1 | 1 | 2 | 1 | 1 | 2 | 1 | 1 |
| Հրատարակած գրք. թիւը. | 20 | 1 | 1 | 2 | 1 | 1 | 16 | 18 | 12 | 12 |
| ԴՐԱՄԱԿԱՆ ՄՈՒՏՔ-ՆԵՐԸ | | | | | | | | | | |
| Մ ո ւ տ ք ։ Մուտքի ամէն տեսակ յօդուածներով. | 12389—08 | 2007—33 | 206—73 | 907—25 | 1934—73 | 2906—57 | 2022—87 | 5473—88 | 5052—79 | 4907—80 |
| Ծ ա խ ք. Գրքերի հրատարակութեան, դիւանական և այլ ծախքերով. | 9802—33 | 1567 — | 231—14 | 1257—10 | 1094—97 | 2736—08 | 3714—11 | 5998—45 | 5342 60 | 4083—87 |

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇԻՒԸ

### ՄՈՒՏՔ

1894 թիւ Յուն. 1—1895 թ. Յունուարի 1-ը

*Մնացորդ առ 1-ն Յունուարի 1894 թ.*

| | | | |
|---|---|---|---|
| 1, Յատուկ գումար . . . | 63 92 | | |
| 2, Ընթացիկ հաշուով Թիֆ. առևտ. բանկ. | 100 — | | |
| 3, Պատրաստի գումար . . . | 1171 98 | | |
| Գումարը | | 1335 | 90 |

| | | | |
|---|---|---|---|
| 1, Անդամավճարներից ա. 352 իսկ. անդամներ. | 2112 — | | |
| բ. 4 մշտական » . | 400 — | | |
| 2, Գրքերի վաճառումից ա. Կենտր. գրավաճառ. | 659 $77^1/_2$ | | |
| բ. Գրաս. և գաւ. վաճառ. | 900 $29^1/_2$ | | |
| 3, Նուէրներից . . . . | 204 — | | |
| 4, Երեկոյթներից *) . . . | 600 — | | |
| 5, Տոկոսիք . . . . . | 31 73 | 4907 | 80 |
| Ընդհանուր գումարը . . | — — | 6243 | 70 |

*) Այս գումարը ստացուած է Բարեգործական Ընկերութեան հետ փետրուարի 11-ին տրուած պարահանդէսից:



ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ * С.С.Р.А Публичная Библиотека 7/XI 1922 имени А. Мясникяна * Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

### ԵԼՔ

| | | | |
|---|---|---|---|
| 1, Գրքերի հրատարակութեան ա. տպագ. ծախքեր | 742 95 | | |
| բ. Թղթի . . | 986 63 | | |
| գ. Հեղինկ. վարձատ. | 1215 52 | | |
| 2, Փոստի ծախքեր . . . . | 310 77 | | |
| 3, Դիւանական ծախքեր . . . | 183 — | | |
| 4, Կահկարասիք . . . . | 30 — | | |
| 5, Տան վարձ . . . . | 300 — | | |
| 6, Ռոճիկներ . . . . | 325 — | 4093 | 87 |

1004

*Մնացորդ առ 1-ն Յունուարի 1895 թիւ*

| | | | |
|---|---|---|---|
| 1, Յատուկ գումար . . . | 65 20 | | |
| 2, Մի խաղարկ. տոմս II-րդ փոխառութեան № $^{8798}/_{30}$ . . . | 228 56 | | |
| 3, Պետական Ազն. Կալուած. բանկի խաղարկ. տոմս № $^{1075}/_{29}$ . . | 194 53 | | |
| 4, Առևտրական բանկում ընթացիկ հաշուով . . . . . | 660 86 | | |
| 5, Պատրաստի դրամ . . . | 1000 68 | 2149 | 83 |
| Ընդհանուր գումար . . | — — | 6243 | 70 |

| Հրատարակութեան տարին։ | Համարը։ | ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԳՐՔԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ | Գրքերի գինը։ Ր. | Կ. | Քանի օրինակ է եղել տպած։ | Որքան օրինակ կար առ 1-ն յունուարի 1894 թ. | Որքան օրինակ կայ առ 1-ն յունուարի 1895 թ. | Ի՞նչ գումարի գիրք է տուած գրավաճառներին եւ աշխատ. անդամներին։ | Ո՞րքան է ստացուած գումարով, տոկոսով եւ անդամներին հասանելիքով։ | Ինչ գումարի գրքեր մընում է գրավաճառների եւ աշխատակից անդամների մօտ։ | Գրասենեակից անդամներին (1893 եւ 1894) տուած գրքեր։ | Նուէր ուսումնարաններին, ցենզուր. կոմիտէտին, գրաշարներին, հեղինակներին եւ այլն։ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1879 | 1 | Թուամաղ մեղու (սպառ.) } Թարգ. օր. Ն. | — | 40 | 1300 | 29 | 3 | Եօթ հազար չորս հարիւր իննսուն | Երկու հազար հարիւր ութսուն | Հինգ հազար | 5 | — |
| 1880 | 2 | Կարմիր լապտեր . } Տ.-Մարկոսեան | — | 30 | 1500 | 301 | 196 | | | | 9 | 5 |
| — | 3 | Մանկական երգեր, Գամառ-Քաթիպայի . | — | 15 | 2400 | 611 | 526 | | | | 15 | 7 |
| — | 4 | Թովմաս եղբօր տնակը } Թարգմ. օր. Ն.<br>Նոյնը կազմած } Տ.-Մարկոսեան . | —<br>— | 45<br>60 | 1500 | 670 | 525 | | | | 15 | 5 |
| — | 5 | Մորիս և նրա ջնջելու հնարները, աշխ. Հ. Տ.-Բարսեղեանի . . . | — | 10 | 1200 | 83 | 23 | | | | 5 | 3 |
| — | 6 | Նեղ և խոնաւ բնակարանների մասին, Հ. Ա. | — | 10 | 1200 | 390 | 351 | | | | 9 | 3 |
| 1881 | 7 | Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. | — | 80 | 1200 | 203 | 123 | | | | 16 | 5 |
| — | 8 | Փոքրիկ ձեռնարկ գործնական տնտեսութեան, Մորիս Բլոքի . . | — | 50 | 1200 | 924 | 895 | | | | 13 | 4 |
| — | 9 | Գամառ-Քաթիպայի բանաստեղծ. (սպառ.) | — | 50 | 3600 | — | — | | | | — | — |
| — | 10 | Ռոբինզոնի պատմութիւն, Թարգմ. Գ. ք. Ա. | — | 60 | 1200 | 463 | 357 | | | | 14 | 6 |
| 1882 | 11 | Ուխտաւորք, գործ Վ. Հ. աշխ. Ռ. Պատկ. | — | 75 | 600 | 198 | 119 | | | | 11 | 6 |
| — | 12 | Գառնուկ և Լուսատտնիկ, Շմիդտի, Թ. Ն. | — | 25 | 600 | 296 | 237 | | | | 19 | 4 |
| — | 13 | Սայեաթ-Նովա, ազգային երգիչ . . | — | 5 | 1200 | 460 | 240 | | | | 16 | 4 |
| — | 14 | Ծննդեան պատմութիւնը . . . | — | 10 | 600 | 273 | 221 | | | | 8 | 6 |
| — | 15 | Ագաթանգեղեայ պատմութիւն . . | 1 | — | 1200 | 797 | 689 | | | | 20 | 3 |
| 1883 | 16 | Գիւղական խալիֆայ, Ա. Արարատեան . | — | 50 | 1200 | 738 | 671 | | | | 16 | 4 |
| 1885 | 17 | Վանայ սազ, Գ. Շերենցի . . . | — | 75 | 613 | 377 | 325 | | | | 9 | 4 |
| — | 18 | Փնջիկ, գրեց Աղէքս. Արարատեան . | — | 20 | 613 | 316 | 228 | | | | 2 | 4 |
| — | 19 | Նամուս, վէպ, գրեց Շիրվանզադէ . | 1 | — | 700 | 155 | 54 | | | | 38 | 3 |
| — | 20 | Ստեփանոսի Տար. Ասող. Պատ. տիեզեր. | 2 | — | 700 | 412 | 379 | | | | 16 | 4 |
| 1886 | 21 | Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը } Գ. Տ.-Աղէք-<br>Նոյնը ընտիր թղթի վերայ } սանդրեան. | 1<br>2 | 50<br>— | 1200 | 916 | 888 | | | | 15 | 4 |
| 1887 | 22 | Ղևոնդ պատմագիր . . . . | 2 | — | 690 | 486 | 449 | | | | 11 | 6 |
| 1888 | 23 | Սրբազան պատմութ. (սպառ.) } Ս. ք. Սա- | — | 30 | 3585 | 17 | 4 | | | | 7 | 2 |
| — | 24 | Նոյնը ուսուցիչների համար } հակեանի . | 1 | 75 | 680 | 210 | 118 | | | | 3 | 3 |
| 1889 | 25 | Սոկրատէս, Թարգմ. օր. Թ. Ստեփեան . | — | 10 | 1200 | 271 | 89 | | | | 21 | 5 |
| 1890 | 26 | Պատմութիւն Հայոց, Պալասանեանի (սպառ.) | 1 | 50 | 2540 | 210 | 1 | | | | 49 | — |
| — | 27 | Ուղեցոյց գործնական չերամապ. Կ. Մ.-Տ. | — | 40 | 1200 | 880 | 797 | | | | 2 | 3 |
| 1891 | 28 | Ժամանակագրութիւն Հայոց Ց. Դարդելի . | 1 | 25 | 700 | 442 | 410 | | | | 13 | 4 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| — | 29 | Վարդ Ռէսլին Սպիրի. Թարգմ. Ի. Ց. . | — | 10 | 1200 | 549 | 330 | | | | 12 | 3 |
| — | 30 | Նալ և Դամայեանթի, Ֆ. Շմիդտի . . | — | 20 | 1200 | 519 | 371 | ղ | մ | | 17 | 5 |
| — | 31 | Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը, | | | 1200 | 479 | 158 | | | կ | 28 | 4 |
| | | Կոմս Լ. Տօլստոյի . . . | — | 7 | | | | ղ | թ | | | |
| — | 32 | Հաւատարիմ Սաւիտրին, Վայլտների . | — | 10 | 1200 | 378 | 279 | | | լ | 17 | 5 |
| — | 33 | Լինհարդ և Գերտրուդ, Պեստալոցցի . | — | 25 | 1200 | 674 | 571 | ղ | օ | մ | 20 | 5 |
| — | 34 | Ցաւելուած ի գիրս պատմութ. Ասողկան . | — | 20 | 189 | 111 | 71 | | | | 9 | 4 |
| — | 35 | Նաւի փոքրաւորը, Մ. Ռոզենհ., Թ. Ի. Ց. | — | 15 | 1200 | 649 | 514 | կ | դ | ւ | 22 | 6 |
| — | 36 | Ուռենց Յովսէփ, Ե. Սպիրի, Թարգմ. Ի. Ց. | — | 15 | 1200 | 649 | 520 | | | | 23 | 6 |
| — | 37 | Մեծապատիւ Մուրացկաններ, Ց. Պ. . | — | 40 | 1200 | 190 | 2 | | | ո | 57 | 1 |
| — | 38 | Ազգային Զոջեր, Ց. Պարոնեանի . . | 1 | — | 1200 | 307 | 143 | ղ | ղ | մ | 45 | 4 |
| — | 39 | Բը-ա-բա, Է. Օժէշկօի . . . | — | 15 | 1200 | 447 | 359 | | | | 16 | 7 |
| — | 40 | Շնիկ, Կուլիկովայի, Թարգմ. օր. Ա. Սահ. | — | 5 | 1800 | 154 | 10 | ւ | ւ | | 31 | 3 |
| — | 41 | Շչեդրինի երեք գրոյցներ . . . | — | 10 | 1200 | 471 | 388 | ո | ո | մ | 9 | 6 |
| — | 42 | Տարասկոնցի Տարտարէնը, Դօդ. Թ. բժ. Թ.Զ. | — | 40 | 1200 | 658 | 511 | | | | 15 | 6 |
| — | 43 | Օրլէանի կոյսը, Օստրոգորսկու, Թ. Ց. Խ. | — | 25 | 1200 | 358 | 152 | ո | ո | ո | 37 | 5 |
| 1892 | 44 | Ց. Արարատեանի կեանքը, Թ. Պ. Պ. . | — | 75 | 1200 | 697 | 658 | | | | 8 | 5 |
| — | 45 | Գաղափարական քահանայ, Պօտապենկօի, | | | | | | ղ | թ | ա | | |
| | | Թարգմ. Ց. Ս. . . . . | — | 75 | 1200 | 525 | 320 | | | | 47 | 5 |
| — | 46 | Ընտանիքի յոյսը, Անենսկայա, Թարգմ. օր. | | | | | | ղ | ւ | ա | | |
| | | Մ. Տ.-Յովսէփեանի . . . | — | 10 | 1200 | 407 | 278 | | | | 35 | 5 |
| — | 47 | Հոսհոսի ձեռատետրը, Ց. Պարոնեանի . | 1 | — | 1200 | 559 | 442 | կ | ո | | 41 | 6 |
| — | 48 | Քիմա Րօսկօի, Թարգմ. Ա. Մէլիք-Ալլահվ. | — | 40 | 1200 | 956 | 900 | | | մ | 12 | 4 |
| — | 49 | Շչեդրինի երեք վէպիկ, Թարգմ. Մ. Ղ. . | — | 15 | 1200 | 765 | 647 | կ | կ | ւ | 20 | 5 |
| — | 50 | Սասմայ ծռեր, Գարեգին սարկաւագ . | — | 50 | 800 | 505 | 456 | | | | 12 | 4 |
| — | 51 | Ջաւախքի բուրմունք, Ե. Լալայեանցի . | — | 25 | 800 | 544 | 499 | լ | լ | կ | 12 | 4 |
| — | 52 | Դաստիարակութիւն, Թարգմ. Մ. Ղ. . | 1 | — | 800 | 493 | 393 | | | | 26 | 5 |
| — | 53 | Մըռռան, Ի. Շմիդտ, Թ. Ա. Քալանթարի . | — | 20 | 2400 | 1900 | 1395 | մ | մ | մ | 10 | 5 |
| — | 54 | Խան-Միրան, գրեց Սէյլան . . | — | 20 | 1200 | 660 | 509 | ւ | ւ | ա | 13 | 5 |
| 1892 | 55 | Տարաս-Բուլբա, Ն. Գօգօլի, Թարգմ. Մ. Ա. | — | 40 | 1200 | 788 | 576 | | | | 34 | 7 |
| — | 56 | Փշրանքներ, Գ. սարկ. Յովսէփեանի . | — | 50 | 800 | 615 | 552 | ո | ո | | 10 | 4 |
| — | 57 | Երկու քոյր, Ղ. Աղայեանի . . | — | 25 | 1800 | 1245 | 970 | | | Հ | 29 | 6 |
| — | 58 | Դրախտի ընտանիք, գրեց Խրիմեան Հայրիկ | — | 60 | 2400 | 25 | 24 | մ | մ | | 1 | — |
| — | 59 | Սիրաք և Սամուէլ, գրեց Խրիմեան Հայրիկ | — | 50 | 2400 | — | — | | | | — | — |
| — | 60 | Փորձանքների բժշկարան, Բրօքերի, Թ. Օ. | — | 20 | 1200 | 853 | 483 | | | | 24 | 4 |
| — | 61 | Մակբէթ, Շէկսպիրի, Թարմգ. Ս. Մալխ. | — | 50 | 1200 | 949 | 870 | ե | ե | ժ | 23 | 3 |
| 1893 | 62 | Պաստեօր, Ս. Բալաղեանի և Ա. Քալանթարի. | — | 20 | 1200 | 893 | 764 | | | դ | 15 | 4 |
| — | 63 | Խօլերա, բժ. Վ. Արծրունու . . | — | 5 | 5000 | — | — | ղ | ղ | | 4 | 7 |
| — | 64 | Խարազի տղայ, Ս. Քամալեանի . . | — | 40 | 1200 | 913 | 661 | | | մ | 26 | 7 |
| — | 65 | Հանրամատչ. Բնախօսութիւն, Վ. Լունկե- | | | | | | կ | կ | | | |
| | | վիչի, Թ. Կ. Գիւլն. . . . | 1 | — | 1200 | 884 | 677 | Հ | Հ | դ | 47 | 7 |
| — | 66 | Փարաւոնի աղջիկը, Էբէրսի, Թարգ. Գ. Շ. | — | 80 | 1200 | 895 | 714 | | | | 33 | 6 |
| — | 67 | Խուն-Խոր, Ց. Ղազարեանցի . . | — | 60 | 1200 | 1073 | 834 | | | | 21 | 7 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| — | 68 | Էլգուջա, վէպ, Թարգմ. Տ. Փիրումեանի . | — | 45 |
| — | 69 | Զորրորդ մոգ, Վան-Դէյկի . . . | — | 5 |
| — | 70 | Դրախտի ընտանիք, գրեց Խրիմեան Հայրիկ | — | 50 |
| — | 71 | Սիրաք և Սամուէլ, գրեց Խրիմեան Հայրիկ | — | 50 |
| — | 72 | Զրոյցներ հողի մասին, Ս. Բալադեանի . | — | 15 |
| — | 73 | Աստղաբաշխութիւն Ֆլամմար., Թ. Տ. Յ. | 1 | — |
| 1894 | 74 | Մանուկների հոգատարութիւնը, Պօկրօվս-կիյ, Թարգմ. բժ. Թ. Ջ. . . | — | 20 |
| — | 75 | Մուկուչի հաւիկը, Պ. Նեզվանօվի. Թ. Գ. Աստ. | — | 15 |
| — | 76 | Երկու հէքեաթ, Կարմէն Սիլ՚վայի. Թ. Ստ. Մ. | — | 10 |
| — | 77 | Կովկասի գերին, Լ. Տօլստոյի. Թ. Պ. Պ. | — | 20 |
| — | 78 | Անճոռնի բադիկը, Անդէրսէնի Թ. Ղ. Ղ. . | — | 5 |
| — | 79 | Վէպիկներ, Շիրվանզադէի . . | — | 40 |
| — | 80 | Դարվինիզմ, Ս. Բալադեանի . . | — | 40 |
| — | 81 | Պետրոս Դուրեան, Արշակ Չօպանեանի . | — | 50 |
| — | 82 | Շիլիօնի կալանաւորը, Մօր. Հարտ. Թ. Կ. Գ. | — | 60 |
| — | 83 | Համլէտ Շէկսպիրի, Թ. անգ. Յով.-խան Մ. | — | 75 |
| — | 84 | Քննական պատ. Հայոց. Մասն Ա. \| Ա. Մ. Գա- | 1 | — |
| — | 85 | Նոյն Մասն Բ. . . \| րագաշեան. | 1 | — |

# II ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

1894 թ. սկզբում Խմբագրական Մասնաժողովը կազմուած է եղել հետևեալ անդամներից. օր. Վ. Յակոբեան, պ. պ. Ղ. Աղայեան, Ստ. Մալխասեան, Յ. Տէր-Մարկոսեան, Ս. Բալադեան, Ա. Դաստակեան և Վ. Լունկեվիչ։ Մարտի 26-ին կայացած Ընդհանուր ժողովում դուրս են գնացել հերթով պ. պ. Ա. Դաստակեան, Ղ. Աղայեան, Յ. Տէր-Մարկոսեան և Ս. Բալադեան։ Դոցա տեղ ընտրուել են պ. պ. Հ. Առաքելեան, Ա. Բարխուդարեան, Յ. Քոչարեան և վերընտրուել է պ. Ս. Բալադեան։

---

Տարուայ ընթացքում Մասնաժողովը ունեցել է 33 նիստ, որոնցից մինչև մարտի 26, այսինքն հին կազմու-



| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1200 | 885 | 613 | կոպէկ: | կոպէկ: | Հինգ կոպէկ: | 42 | 17 |
| 1200 | 706 | 183 | | | | 34 | 7 |
| 2400 | 1258 | 756 | | | | 56 | 7 |
| 2400 | 1265 | 866 | | | | 49 | 7 |
| 1200 | 1000 | 653 | | | | 16 | 6 |
| 1200 | 992 | 787 | | | | 48 | 40 |
| 1200 | | 131 | | | | 56 | 53 |
| 1200 | | 180 | | | | 34 | 52 |
| 1200 | | 224 | | | | 36 | 50 |
| 1200 | | 214 | | | | 37 | 52 |
| 1200 | | 54 | | | | 24 | 43 |
| 1200 | | 803 | | | | 38 | 53 |
| 800 | | 329 | | | | 49 | 38 |
| 1200 | | 704 | | | | 37 | 54 |
| 800 | | 377 | | | | 26 | 54 |
| 1200 | | 762 | | | | 27 | 132 |
| 1200 | | 1200 | | | | — | — |
| 1800 | | 1800 | | | | — | — |
| | | | 7495—99 | 2185—87 | 5310—05 | 1847 | 957 |

թեամբ—5 նիստ, և նոր կազմութեամբ 28 նիստ։ Ապրիլի վերջերին Մասնաժողովի անդամութիւնից հրաժարուել է պ. Վ. Լունկեվիչը։

Մինչև մարտի վերջը նախագահի պաշտօն վարել է պ. Յ. Տէր Մարկոսեան, իսկ քարտուղարի պ. Ս. Մալխասեանը։ Նոր կազմութեան մէջ նախագահ էր պ. Ս. Բալադեանը. իսկ քարտուղար պ. Յ. Քոչարեանը։

Տարուայ ընթացքում անդամների բացակայութիւնը նիստերից արտայայտուել է հետևեալ թուերով. Պ. Դաստակեանը—3 անգամ, պ. Մալխասեանը—3 անգամ (որոնցից երկուսը քաղաքից բացակայ լինելու պատճառով), օր. Յակոբեանը—2 անգամ, պ. Առաքելեանը—2 անգամ, պ. Յ. Տէր-Մարկոսեանը 2 անգամ և պ. Բալադեանը մի անգամ։

Անդամների չգալու պատճառով չկայացած նիստ եղել է երկու։ Նիստեր եղել են ամբողջ տարին շաբաթը մի անգամ մի քանի ընդհատումներով ամառուայ ընթացքում։

---

1894 թ. ընթացքում Խմբագրական Մասնաժողովի քննութեան նիւթ են եղել հետևեալ գրքերը և ձեռագրերը, որոնց Մասնաժողովը ստացել է Վարչութեան միջոցով կամ ընտրել է իւր կողմից.

1. Մօնգոմերի, Նրան չըհասկացան, թարգմ. ռուսերէնից Պ. Պ.

2. Կարմեն Սիլվայի երկու հեքիաթներ. Իպլիան ժայռերը և Այրուած ապառաժ, թարգ. ռուսերէնից։

3. Жюль Вернъ. Семья безъ имени.

4. Анненская. Волченокъ.

5. А. Доде. Волненье молодой куропатки.

6. Գերշտեկեր. Молодой золотоискатель.

7. Уйда. Муфлу. Изъ страны яблонь. Дитя изъ Урбино.

8. Գ. Երեցփոխեանի «Հայրը ինչ տարաւ՝ որդին էլ այն կըտանի»։

9. Կ. Գիւլնազարեանի «Շիլիօնի կալանաւոր», թարգ. ռուսերէնից. Մօրից Հարտմանի։

10. Տ. Փիրումեան. Սահակ և Մեսրովբ ու սրանց աշակերտները։

11. П. Виноградовъ. Древняя исторія.

12. Պ. Պ. «Կովկասի գերին» թարգ. Լև Տօլստօյից.

13. Նեզվանով. «Մուկուչի հաւիկը». թարգ. ռուսերէնից, Գ. Աստուածատրեանցի։

14. Միրիմանեան, «Բոյսերի մասին»։

15. Ղազբէգից, երկու պատմուածքներ «Էլբէրտ» և «Բերտիա», Թարգմ. Մ. Նաւասարդեամի։

16. Յ. Ծուղուրեան. «Գեղջուկի քնարը»։

17. Վ. Գարշին. «Չորս օր», թարգմ. Յ. Օհանեանի.

18. Лункевичъ. Какъ живетъ растеніе.

19. Գրիգորիս Երզնկեան. Պատմութիւն մանկավարժութեան.

20 Յովսէփ Ծանիկեան. Հնութիւնք Ակնայ։

21. „Малютка“ գրքից մի քանի փոքրիկ պատմութիւններ, թարգ. օր. Վ. Տէր-Յովսէփեանի։



22. Շիրվանզադէի հետևեալ գրուածքները. 1) Օրիորդ Լիզա. 2) Թանկագին Կապանք, 3) Ֆաթմա և Ասադ, 4) Խելագարը, 5) Շրջանից արտաքսուածը։

23. Ղ. Ա. «Անճոռնի Բադիկ» Անդերսէնից.

24. Շեկսպիր. Համլէտ. թարգմ. անգլիերէնից, Յովհ. Խան-Մասեհեանի։

25. Ի. Փիրղուղաղեան. Մի քանի հոգևոր մտածմունք։

26. Սիրական Տէր-Մարտիրոսեան. Մահմեդի կրօնը։

27. Յովհ. Ամիրխանեան. Ռօբերտ Ֆուլտոն, շոգենաւի հնարողը։

28. Ս. Բալաղեան. Դարվինիզմ։

29. Վ. Գարշին. Չորս օր. թարգմ. Յ. Օհանեանի—երկրորդ անգամ ներկայացրած Խմբ. Մասնաժողովին։

30. Մ. Իսահակեան. Մի խուրձ խոտ Շիրակայ դաշտից. Ժողովածու։

31. Միրզա Տէր Սարգսեան. Աբրահամ Լինկօլն. թարգմ. ռուսերէնից։

32. Ելենա Զելանդ. վերջին օրեր. թարգմ. Ա. Փորսուղեանի։

33. Վ. Գլադստօն. թարգմ. Ա. Մանուկեանի։

34. Էմիլ Դեբօ. Ծերունի այգեպանի զրոյցները։

35. Բեբուրեան. Ձայն հառաչանաց։

36. Լազարևիչ, Իմ հայրս, թարգ. ռուսերէնից Յովհ. Մեղնիկեան։

37. Բեատրիչէ Գօտրադէն. Թուրցիկ Ստուերներ. թարգմ. ռուսերէնից Արշակունի.

38. Գերմանացիների կեանքից. թարգմ. Մարգար Աւագեան։

39. Յ. Տէր-Յարութիւնեան. Ճանապարհորդական նկատմունք.

40. Վ. Արծրունի. Դպրոցական առողջապահութիւն։

41. Արտաշէս Օհանջանեան. Բանաստեղծութիւններ։

42. Սարգիս Տէր-Գրիգորեան. Հայերէն գրութեան նոր ձև և հայերէն տառերի բացատրութիւն.

43. Շահան Ջրպետ. Հին հայերի կառավարութիւնը և կրօնը, թարգ. ֆրանսերէնից.

44. Էլիզա Օժեշկօ. Հզօր Սամսօն, թարգմ. Յ. Վարդապետրիկեան.

45. Ա. Քիշմիշեան. Դասագիրք Բուսաբանութեան։

46. Ադելեան. Ներհակ Առաքել. «Մուրճ» ամսագրից.

47. Գրիբօյեդով. Խելքից պատուհաս, թարգմ. Ն. Մամիկոնեան—Մանականի։

48. Պուշկին. Կապիտանի աղջիկը. Թարգմանութիւն։

49. Յովհ. Գնունի. Հոմերոս և իւր գրուածքները։

50. Վ. Փափազեան. Պատկերներ Թիւրքահայոց կեանքից. II հատոր։

51. Ն. Մելիք-Թանգեան. Սամսօնը Բայազէդից փախչում է։

52. Ն. Մանական, Հազարից մէկը, վէպ։

53. Խ. Պետրոսեան. Թորոսի թոփալ գոմէշը։

54. Պօգօսսկիյ. Նախախնամութեան դատաստան. թարգ. ռուսերէնից Գ. Յովսէփեան։

55. Յ. Մեղաւորեան. Հայկական ընտանիքի մասին. ֆրանսերէն լեզուով։

55. Յ. Դուրբախեան, Թռչող մտքեր։

57. Շեկսպիր. Էդուարդ III, թարգմ. Կիւրեղեան.

58. Զօպանեան. Պետրոս Դուրեանի կենսագրութիւնը։

Վերոյիշեալ գրքերից յարմար են դատուած տպագրութեան համար հետևեալները.

№ 2. Կարմեն Սիլվայի երկու հեքիաթներ. Ցիպեան ժայռեր և այրուած ապառաժ։

№ 5. А. Доде. Волненіе Молодой Куропатки.

№ 7. Уйда-ի երեք հեքիաթները. Муфлу. изъ страны яблонь и Дитя изъ Урбино.

№ 9 Մօրից Հարտմանի «Տիլիօնի կալանաւոր», թարգ. Կ. Գիւլնազարեանի։

№ 12. Լև Տօլստօյի. Կովկասի գերի. թարգ. Պ. Պ.



13. Նեգվանով. Մուկուչի հաւիկը. թարգմ. Գ. Աստուածատրեանց։

№ 20. Յովսէփ Ճանիկեան. Հնութիւնք Ակնայ։

№ 22. Տիրվանզադէի երեք վէպիկները. 1) Օրիորդ Լիզա. 2) Թանկագին կապանք և 3) Ասադ և Ֆաթմա։

№ 23. Ղ. Ա. Անճոռնի Բադիկ.

№ 24. Շէկսպիր. Համլէտ. թարգմ. Յովհ. Խան Մասէհեանի։

№ 28. Ս. Բալագեան. Դարվինիզմ։

№ 45. Ա. Քիշմիշեան. Դասագիրք Բուսաբանութեան։

№ 52. Ն. Մանական, Հազարից մէկը, վէպ։

№ 58. Ա. Զօպանեան, Պետրոս Դուրեանի կենսագրութիւնը։

Ընդամենը 14 գիրք.

---

Խմբ. Մասնաժողովը դեռ վերջնական որոշում չի կայացրել հետևեալ գրուածքների մասին.

№ 1. Մոնգոմերի. Նրան չըհասկացաւ. թարգ. Պ. Պ.

№ 11. П. Виноградовъ. Всеобщая исторія.

№ 18. В. Лункевичъ. Какъ живетъ растеніе.

№ 30 Մ. Իսահակեան. Մի խորոմ խոտ. ժողովածու։

№ 40 Վ. Արծրունի, Դպրոցական առողջապահութիւն։

№ 55. Յ. Մեղաւորեանի գրուածքը։

Ընդամենը 6 գիրք։

---

Զանազան պատճառներով անյարմար են համարուած տպագրութեան համար հետևեալ գրքերը, որոնց միայն №№-ն ենք մէջ բերում, 3, 4, 6, 8, 10, 14, 15, 16, 17, 19, 21, 25, 26, 27, 29, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38,

39, 41, 42, 43, 44, 46, 47, 48, 49, 50, 51, 53, 54, 56 և 57.
Ընդամենը 38 գրուածք։

---

Բացի վերոյիշեալ գրքերից Խմբ. Մասնաժողովը պատրաստում էր տպագրութեան համար «Պօլօժէնիէ»-ի հայերէն թարգմանութիւնը բոլոր լրացուցիչ յօդուածներով։

—

Զբաւականանալով այն գրքերով, որ Մասնաժողովը պատահաբար ստանում էր զանազան տեղերից՝ Մասնաժողովը զբաղուեց և կազմելով ցուցակ ընտիր եւրոպական՝ գլխաւորապէս վիպական գրուածքների, որոնց արժէ թարգմանել։ Այդ գրուածքները նա բաժանեց իւր անդամների մէջ ծանօթանալու և զեկուցումներ տալու համար։

Անցեալ տարուայ Խմբ. Մասնաժողովի տեղեկագրի մէջ ներկայացրած ծրագրից այս տարի հրատարակուել են №№ 2, 12, 12, 23, 28, 58։

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 1894 ԹՈՒԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

### ԱՇԽԱՏԱԿԻՑ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| Արմեանսկ-բազար | Յովհաննէս Դաւթեան |
| Ագուլիս | Աւետիս Դաւթեան |
| | Տիգրան Գիւզալեան |
| Ագա | Յ. քահ. Տէր-Յակոբեան |
| Ալէքսանդրոպոլ | Ալէքսանդր Մխիթարեան |
| | Յակովբ Կրիտեան |
| | Յակովբ Տէր-Պօղոսեան |
| | Սանդուխտ Տէր-Պօղոսեան |
| Ախալքալաք | Զարմայր Առվանեան |
| Ախալցխա | Ալէքսանդր Այվազեան |
| | Յովհաննէս Նալբանդեան |
| Աղստաֆա | Ալէքսանդր Մամիկոնեան |
| Արմաւիր | Գաբրիէլ քահ. Թուէլեան |
| Արդուին | Պետրոս Սուքոյեան |



| | |
|---|---|
| Բագու | Աստուածատուր Վաչեան |
| | Արսէն Կրասիլնիկեան |
| Բաթում | Առաքել Սարուխանեան |
| Գանձակ | Մարտիրոս Նաբաթեան |
| Գորիս | Եսայի Մէլիք-Փարսադանեան |
| | Յովհաննէս Դանիէլեան |
| Դերբենդ | Կոստանդին Ղազարեան |
| Դիլիջան | Սահակ Ադամեան |
| | Սարգիս Տէր-Պօղոսեան |
| Դուշէթ | Սարգիս Սարումեան |
| Երևան | Սիմէօն Հախումեան |
| Երնջակ | Արսէն աբեղ. Ղլթչեան |
| Եվլախ | Արսէն Տէր-Դանիէլեան |
| Վաղարշապատ | Աւետիս Օհանջանեան |
| Թելաւ | Միքայէլ Վերմիշեան |
| | Յովհաննէս Ղուլիջանեան |
| Կարս | Աստուածատուր Յովսէփեան |
| | Բժ. Ալէքսանդր Ղազազեան |
| | Սեդրակ Գրիգորեան |
| Ղազախ | Ալէքսանդր Ջաղէթեան |
| Ղարասուբազար | Յովհաննէս Սելինեան |
| Ղզլար | Կոստանդին Գիւլնազարեան |
| Մելիտոպոլ | Պետրոս Ջերնիկեան |
| Մոսկվա | Աւետիս Վաչեան |
| | Յովհաննէս Մուսինեան |
| Նոր Բայազէթ | Ներսէս Ազիզեան |
| | Ստեփան Բաղիկեան |
| Նուխի | Օր. Հեղինէ Մակեդոնեան |
| Շամախի | Սմբատ Սարգիսբէգեան |
| Շուլավէր | Սեդրակ Մելիք-Սարգսեան |
| Շուշի | Լևոն Սարգսեան |
| | Մովսէս Իսգբաշեան |
| Սևանա վանք | Դպիր Արիստակէս Զուլոյեան |
| Սիմֆերոպոլ | Սերաֆիմ Մսերեան |
| Սղնախ | Միքայէլ Եարեան |
| Սուխում | Նիկողայոս Աթաբէգեան |
| Օդեսսա | Միքայէլ Մուրադեան |

## ՄՇՏԱԿԱՆ ԱԴԱՄՆԵՐ

(Հիմնարկութեան օրից)

1 Ադամեան Յովհաննէս
2 Ալիբէգեան Պետրոս
3 Արամեան Միքայէլ
4 Եարալեան Գրիգոր
5 Թամամշեան Միքայէլ
6 Ժամհարեան Իսահակ
7 Լալայեան Ալէքսանդր
8 Ծովեանեան Իսահակ
9 Ղուկասեան Աւետիք
10 Շահազիզ Սմբատ
11 Սալթիկեան
12 Սվէչնիկեան Լազար
13 Տ.-ԱստուածատրեանԴաւիթ

## ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

### Թիֆլիս

1 Աթաբէգեան Ներսէս
2 Ալիխանեան Յովհաննէս
3 Աղամիրզեան Յովհաննէս
4 Ամիրաղեան Բագրատ
5 Ամիրանեան Գէորգ
6 Ամիրխանեան Յովսէփ
7 Անանեան Աղէքսանդր
8 Անանեան Աղէքսանդր
9 Առաքելեան Համբարձում
10 Ասլամազեան Ալէքսանդր
11 Աստուածատրեան Գէորգ
12 Արծրունի բժ. Վահան
13 Արղութեան Բորիս
14 Արղութեան Նիկողայոս
15 Արղութեան իշխ. օր. Սոֆիա
16 Աւագեան Բէգլար
17 Ափեան Ղազար
18 Բադամեան Գրիգոր
19 Բալադեան Սամուէլ
20 Բարխուդարեան Արշակ
21 Բարսամեան Բարսեղ
22 Բէգ-Աւագեան Մարգար
23 Բէնքլեան Արշակ
24 Գոլոշեան օր. Դարիա
25 Դաւթեան Լեւոն
26 Դոլուխանեան Բօղդան
27 Դոլուխանեան Մարկոս
28 Դովլաթեան Յովակիմ
29 Երզնկեան Գրիգորիս
30 Էնֆիաճեան Արտաշէս
31 Էնֆիաճեան Մկրտիչ
32 Էնֆիաճեան Տիգրան
33 Թադէոսեան Արշակ
34 Թառայեան Աւետիք
35 Թարխանեան Ալէքսանդր
36 Թումանեան իշխ. Մարիամ
37 Լիսինեան Արտեմ
38 Լիսիկեան Արշակ
39 Լիսիցեան Ստեփան
40 Լօրիս Մելիքեան Յովհան.
41 Խանդամիրեան Գրիգոր
42 Խանդամիրեան Տիգրան
43 Խաչատրեան Խաչատուր
44 Խաչատր, օր. Մարգարիտ
45 Խաչիկեան Մկրտիչ
46 Խատիսեան օր. Նունէ



47 Խարազեան Տիկ. Մարիամ
48 Խարազեան Սարգիս
49 Խուդավերդեան Աղէքսանդր
50 Ծովիանեան Կոնստանդին
51 Կարամուրզա Խրիստափոր
52 Կիրակոսեան Յովսէփ
53 Ղազարեան Գէորգ
54 Ղազարեան Նազար
55 Ղաւալեան Հայկ
56 Ղուլիջանեան օր. Նունէ
57 Ղուկասեան Յովսէփ
58 Մալխասեան Ստեփան
59 Մալումեան Խաչատուր
60 Մանթաշեան Ալէքսանդր
61 Մանուէլեան Ստեփան
62 Մամիկոնեան Արտաշէս
63 Մարկոսեան Յովսէփ
64 Մեասնիկեան Գրիգոր
65 Մելեան տիկ. Վառվառէ
66 Մէլիք-Ազարեան Ալէքս.
67 Մէլիք-Ալլահվերդ. Ալէքս.
68 Մէլիք-Ղարագէօզեան Պօղ.
69 Մեհրաբեան Արշակ
70 Միրզօյեան Գաբրիէլ
71 Միրզօյեան Նիկողայոս
72 Մովսիսեան Մարգար
73 Մուրադբէգեան Սարգիս
74 Մուրադեան Եղբ.
75 Յակովբեան օր. Վարդուհի
76 Յարութիւնեան Կոստանդ.
77 Յարութիւնեան Սամսոն
78 Նադիրեան Յարութիւն
79 Նազարեան Տիգրան
80 Նաւասարդեան բժ. Բագր.
81 Շադինեան Գէորգ
82 Շահբաղեան Վահան
83 Շահիկեան Աղէքսանդր
84 Շահնազարեան օր. Սօֆիա
85 Շահումեան Գէորգ
86 Շիրվանզադէ
87 Պառաւեան Սիմէօն
88 Ռօտինեան Աղէքսանդր
89 Ռօտինեան Տիգրան
90 Սահակեան օր. Աննա
91 Սահակեան օր. Դարեա
92 Սարաջեան Բագրատ
93 Սարաջեան Գրիգոր
94 Սերեբրակեան օր. Մարիամ
95 Սողոմոնեան Սարգիս
96 Սուսանեան Միքայէլ
97 Սուրէնեան Գէորգ եպիսկ.
98 Սպենդիարեան Յովհաննէս
99 Ստեփանեան Յովհաննէս
100 Սօղալեան օր. Նունէ
101 Վարդազարեան Փիլիպպոս
102 Վարդապետեան Աւետիք
103 Վրոյր Արամ
104 Տէր-Աստուածատր. Աղասի
105 Տէր-Գրիգորեան Արշակ
106 Տէր-Խաչատրեան Եղիա
107 Տէր-Մարկոսեան Յովհան.
108 Տէր-Նիկողոսեան Գրիգոր
109 Տէր-Պետրոսեան Գրիգոր
110 Տէր-Սարգսեան Յովհան.
111 Տիգրանեան Նազարէթ
112 Տիգրանեան տիկ. Նատալ.
113 Քալանթար Ալէքսանդր
114 Քալանթարեան Պետրոս
115 Քալանթարեան Քալանթ.
116 Քոչարեան Յակովբ
117 Օհանջանեան Աւետիք

### Ագուլիս

118 Արասխան. տիկ. Աննման
119 Ղարիբեան Մէլիքսեդէկ
120 Ղլրուղեան տիկ. Սաթենիկ

121 Սամարչեան Նիկողայոս
122 Տէր-Մկրտչեան Ալէքս.

*Ազա (գիւղ)*

123 Տ.-Յակովբեան Կար. քահ.

*Ախալքալաք*

124 Վարդանեան Սարգիս

*Աղէքսանդրիա (Եգիպտ.)*

125 Բարթողեան Աբրահամ
126 Ծէվահիրճեան Ալէքս.
127 Փափազեան Ե.
128 Օհանեան Պերճ

*Ալէքսանդրոպոլ*

129 Ղօլթուղչեան Ստեփան
130 Սիլանեան Յարութիւն

*Աղստաֆա*

131 Իսավերդեան Ալէքսանդր
132 Հունուտցեան Մարտիրոս
133 Գալստեան Սահակ
134 Մամիկոնեան Ալէքսանդր
135 Մեսրովբեան Միսակ
136 Մէտէնջեան Գառնիկ
137 Պօղոսեան Պօղոս

*Արդուին*

138 Սուքոյեան Պետրոս

*Բաքու*

139 Ադամեան Յարութիւն

140 Ասրիբէգեան Ալէքսանդր
141 Արամեան Միքայէլ
142 Արտեմեան Մարգար
143 Բաբախանեան Առաքել
144 Բաբայեան Արամ
145 Բարխուդարեան Գերաս.
146 Բէգլարեան Միքայէլ
147 Բէհրամեան Ալէքսանդր
148 Գեանջէցեան Արշակ
149 Գեանջէցեան Հայկ
150 Դիլգարեան Յովհաննէս
151 Եղիազարեան Եղիա
152 Թաղիանոսեան Ստեփան
153 Թաւրիզեան Օհանջան
154 Ժամակոչեան Վաղարշակ
155 Լազարեան Պետրոս
156 Խատիսեան Կոնստանդին
157 Հայրումեան Վլաս
158 Մադաթեան օր. Աննման
159 Մանուէլեան Միքայէլ
160 Մարգարեան Յովհաննէս
161 Մարգարեան Պատուական
162 Մարտիրոսեան Պօղոս
163 Յարութիւնեան Դաւիթ
164 Ղուկասեան օր. Մարիամ
165 Նաբաթեան տիկ. Մարիամ
166 Նազարեան Աղէքսանդր
167 Շլթեան Ադամ
168 Ունանեան Միքայէլ
169 Պապովեան Եղիա
170 Պարոնեան Արշակ
171 Պարոնեան Լեւոն
172 Վաչեան Աստուածատուր
173 Վաչեան Տիկ. Մարիամ
174 Տէր-Միքայէլեան Ստեփան
175 Տէր Օհանեան Օհան
176 Փանեան Միքայէլ



177 Քաջազնունի Յովհաննէս

*Բաթում*

178 Զաքարիաեան Թադէոս
179 Խօջամիրեան Աւետիս
180 Ծատուրեան Արշակ
181 Յարութիւնեան Եսայի
182 Յովհաննիսեան Աբիսողոմ
183 Սարուխանեան Առաքել
184 Վարշամեան Աղէքսանդր

*Բէլգրադ*

185 Սմիրնովա տիկ. Մարիամ

*Գիւքգում*

186 Աթաջանեան Սայեաթ
187 Աթաջանեան Թեւան
188 Պապեան Անդրէաս

*Դիլիջան*

189 Ադամեան Սահակ
190 Ասլանեան Գրիգոր
191 Գրիգորեան Յարութիւն
192 Մատինեան Վահան
193 Մարտիրոսեան Բէգլար
194 Յովակիմեան Սարգիս
195 Սայեաթնովեան Տիգրան
196 Սաքորեան Մարտիրոս
197 Տ.-Սիմէօնեան Խաչատուր
198 Քեանդար. Տիկ. Կատարինէ

*Դուշէթ*

199 Սարումեան Սարգիս

*Դերբէնդ*

200 Շահիջանեան Աղէքս.

*Երեւան*

201 Ահարոնեան Գէդէոն
202 Ամատունի Սահակ վարդ.
203 Ամիրխանեան Լեւոն
204 Արզումանեան Ադամ վ.
205 Արտազեան Բագրատ
206 Դիլանեան Մարկոս
207 Եղիազարեան Բարսեղ
208 Խուդաբաշեան Մելքոն
209 Կամսարական Կարապետ
210 Հախումեան Աբրահամ
211 Հախումեան Սիմէօն
212 Հախումեան տիկ. Վարդհ.
213 Մելիք Դադայեան Հայկ
214 Մելիքեան Յովհաննէս
215 Մնացականեան Գաբրիէլ
216 Մուսինեան Մկրտիչ
217 Նազարէթեան Յովհաննէս
218 Ջալալեան Ռուբէն
219 Վարդանեան Տրդատ
220 Տէր-Գրիգորեան Էմին
221 Տ.-Գրիգորեան Վահ. վարդ.
222 Տ.-Մկրտչեան Համազասպ
223 Տէր-Մարտիրոսեան Միրաք.
224 Տէր-Յովհաննէս Հայկ

*Եվլախ*

225 Գասպարեան Մովսէս
226 Տէր-Դանիէլեան Արսէն

*Զաքաթալա*

227 Մել.-Նուբարեան Յովհան.

### Էջմիածին

228 Մաղաթեան Եղիշէ
229 Սաղաթէլեան Յովհաննէս
230 Տէր-Գաբրիէլեան Սարգիս
231 Վարդանեան Արմէն

### Լազօղաղ

232 Զարաբեան Արշակ
233 Խանազեան Միքայէլ
234 Մատինեան Ստեփան
235 Յակովբեան Երմոգինոս
236 Պետրոսեան Պետրոս
237 Օթարեան Յովհաննէս

### Խանքէնդի

238 Քօչարեան Առաքել

### Խարկով

239 Լազարեան Գէորգ

### Կարս

240 Ամիրեան Խաչատուր
241 Յովսէփեան Աստուածատ.
242 Տէր-Յակովբեան Սմբատ

### Կաղզուան

243 Բունիաթեան Միքայէլ
244 Ջանփոլադեան Ստեփան

### Հաջամէթ

245 Յովհաննիսեան Սարգիս
246 Սերեբրակեան Աղէքսանդր

### Հին-Ղրիմ

247 Օհանեան Անտոն

### Հին-Նախիջեւան

248 Ղլթչեան Արսէն վարդ.
249 Յովհաննէսեան օր. Կատ.
250 Տէր-Բաղդասարեան Գար.
251 Տ.-Յակոբեան Գրիգ. վարդ.

### Ղազախ

252 Ջաղէթեան Աղէքսանդր

### Ղզլար

253 Աղաբալեան Կարապետ
254 Աստուածատր. Ալէքս. քահ.
255 Աստուածատր. Խաչ. քահ.
256 Բաղդասար. Յարութիւն
257 Բերոյեան օր. Գայիանէ
258 Գիւլնազար. Կոստանդին
259 Գօզերգեան օր. Շուշանիկ
260 Գօզերգ. տիկ. Շուշանիկ
261 Եազորեան Յովհաննէս
262 Թամազեան Սարգիս
263 Իզմիրեան Մովսէս
264 Իւզբաշեան Գրիգոր քահ.
265 Ղամբարեան Յովհաննէս
266 Մաժինեան տիկ. Շողակաթ
267 Մաժինեան օր. Շուշանիկ
268 Մարգարեան Մինաս սարկ.
269 Միշվելեան Ռոմանոս
270 Միրզեան Սարգիս



271 Մկրտումեան Գէորգ քահ.
272 Մուրադբէգեան Աղէքս.
273 Պապովեան օր. Մարիամ
274 Պապովեան Յովհաննէս
275 Տ.-Նիկողայոս. Յարութիւն
276 Տ.-Օհանեան տիկ. Աննա
277 Օհանեան տիկ. Մարիամ

### Մեղրի

278 Գալստեան Գալուստ
279 Դանիէլեան Յովհաննէս
280 Իսրայէլեան Գէորգ
281 Վաչեան տիկ. Կատարինէ
282 Տէր-Զաքարեան Մեսրովբ

### Մերվ

283 Մէլիք-Մկրտչ. Միլիտոս

### Մոզիկան

284 Եղեան Սիմէօն

### Մոսկվա

285 Աւետիսեան Բարսեղ
286 Բէգլարեան Աշոտ
287 Գէորգեան Գերասիմ
288 Լազարեան Մինաս
289 Մուսինեան Յովհաննէս
290 Ներսէսեան
291 Պօղոսեան Աւետիս
292 Տէրեան Մկրտիչ
293 Քանանեան Գէորգ
294 Քանանեան տիկ. Վարվառէ

### Նոր-Բայազէթ

295 Բուռնազեան Աւետիք
296 Մամիկոնեան Յակովբ

### Նուխի

297 Ահարոնեան Յակովբ
298 Ոսկանեան Հայրապետ

### Շամախի

299 Սմբատեան Մեսր. արքեպ.

### Շուլավեր

300 Անանեան բժ. Յովհաննէս
301 Մէլիք-Սարգս. օր. Կատ.

### Շուշի

302 Աբաղեան Աւետիք
303 Գաթէնեան Զատիկ
304 Գիւլնազարեան Յովհան.
305 Դէմուրեան Ստեփան
306 Զաքարեան օր. Վարսենիկ
307 Զաքարեան Պետրոս
308 Թորոսեան Գրիգոր
309 Թումանեան Ստեփան
310 Ժամհարեան Մարգարա
311 Իւզբաշեան Մովսէս
312 Իւզբաշեան Ստեփան-բէգ
313 Լալազարեան Միրզաջան
314 Խունունցեան Մնացական
315 Ղալումեան Հայրապետ
316 Ղուլիքեխեան Սարգիս
317 Մէլիք-Թանգեան Նիկող.
318 Շահնազարեան Մովսէս
319 Տէր-Յակովբեան Եփրեմ
320 Տէր-Սահակեան Բագրատ

321 Տէր-Սարգսեան Միրզա
322 Օհանեան Նիկողայոս

*Պետերբուրգ*

323 Կոստանեան Կարապետ

*Պեխ*

324 Մէլիք-Փարսադան. Եսայի

*Սղնախ*

325 Աբրահամեան Սարգիս
326 Եարեան Յովսէփ
327 Խիթարեան Միքայէլ
328 Օթարեան Մ. Յ.

*Սուխում*

329 Աթաբէգեան Նիկողայոս
330 Զաքարեան Աբրահամ
331 Զաքարեան Միրզա

*Ստաւրապօլ*

332 Բէկգիւլեան Բարդուղ. ք.
333 Եագոյեան Կարապետ ք.
334 Լազարեան Աղէքսանդր
335 Նազարեան Մարտին

*Վաղարշապատ*

336 Ասլանեան Լեւոն

337 Եսայեան Յովհան. բէգ
338 Ջէօրէքչեան Գէորգ սարկ.
339 Սարաֆեան Գարեգին
340 Տէր-Գրիգորեան Բենիամին

*Վարշաւա*

341 Երեցփոխեան Յակովբ
342 Եարղուլեան Թովմաս
343 Ջոհրաբեան Մ. Ի.
344 Ղազազեան
345 Րոստոմեան Մ. Ա.
346 Փիրադեան Սամսոն

*Վարցիխ*

347 Անանեան Միհրան

*Ցարսկիե Կօլօդցի*

348 Տէր-Յովհաննիսեան Բաղդ.
349 Օթարեան Յարութիւն

*Քութայիս*

350 Պապօվեան Կոստանդին
351 Ստեփանեան Լեւոն

*Օդեսսա*

352 Մուրադեան Միքայէլ

---

## ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

### *ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ*

Մինչեւ 30 ապրիլի 1895 թ.

---

*Թիֆլիս*

1 Աթաբէգեան Ներսէս
2 Ազամալեան բժ. Եփրեմ
3 Ազանեան Գիւտ քահանայ
4 Ամիրխանեան Յովսէփ
5 Անանեան Աղէքսանդր
6 Անանեան Յովհաննէս
7 Առաքելեան Համբարձում
8 Ասլեան Միսակ
9 Բալադեան Սամուէլ
10 Բարխուդարեան Արշակ
11 Դոլուխանեան Բօղդան
12 Դոլուխանեան Մարկոս
13 Դոլուխանեան Պօղոս
14 Դովլաթբէգեան Յարութ.
15 Դովլաթեան Յովակիմ
16 Երզնկեան Գրիգորիս
17 Թամամշեան Աղէքսանդր
18 Թումանեան իշխ. Մարիամ
19 Թումանեան Յովհաննէս
20 Թումեան Յովհաննէս
21 Խանդամիրեան Գրիգոր
22 Խաչատրեան Խաչատուր
23 Խատիսեան օր. Նունէ
24 Խարազեան տիկ. Մարիամ
25 Ծովեանեան Կոնստանդին
26 Ծուբինեան Սողոմոն
27 Կանդուրալեան Պօղոս
28 Կարապետեան բժ. Աղէքս.
29 Ղոնդաղսազեան Արշակ
30 Ղուլեան Մամիկոն
31 Մալխասեան Ստեփան
32 Մալումեան Խաչատուր
33 Մարանջեան Սմբատ
34 Մեասնիկեան Գրիգոր
35 Միլեան տիկ. Վառվառէ
36 Յակոբեան օր. Վարդուհի
37 Յարութիւնեան Սամսոն
38 Նաւասարդեան բժ. Բագր.
39 Շահիկեան Աղէքսանդր
40 Շահումեան Գէորգ
41 Պետրոսեան Պետրոս
42 Ռոտինեան Տիգրան
43 Սուրէնեան Գէորգ արք-եպ.
44 Ստեփանեան Գրիգոր
45 Ստեփանեան Յովհաննէս
46 Սօղալեան օր. Նունէ
47 Վարդապետեան Աւետիք
48 Տէր Գրիգորեան Արշակ
49 Տէր-Գրիգորեան Յակովբ
50 Տէր-Նիկողայոսեան Գրիգոր
51 Տէր-Սարգսեան Յովհաննէս
52 Տէրտէրեան Արտաշէս
53 Տիգրանեան տիկ. Նատալ.
54 Քալանթար Աղէքսանդր
55 Քօչարեան Յակովբ

*Ագուլիս*

56 Սամարչեան Նիկողայոս

*Ալէքսանդրօպօլ*

57 Բէժանեան Միքայէլ
58 Կոստանեան Յովհաննէս

*Ախալքալաք*

59 Արվանեան Զարմայր
60 Գրիգորեան Արշակ
61 Ղուկասեան Լեւոն
62 Մաղաքեան Կարապետ
63 Պաստուրմաճեան Եղիշէ

*Աղստաֆա*

64 Գալստեան Սահակ

*Արդուին*

65 Ակինեան Ստեփան
66 Սուքոյեան Պետրոս
67 Տէր-Ստեփանեան Գաբրիէլ

*Արմաւիր*

68 Խառայեան օր. Հռիփսիմէ
69 Նազարեան Քրիստափոր
70 Նազարեան Պօղոս
71 Սէֆերեան Գէորգ քահ.
72 Տէր-Յովակիմեան Կարապ.
73 Օհանեան Առաքել
74 Օրդուխանեան Սիմէօն

*Արմենանսկ-Բազար*

75 Ալթնթոփեան տիկ. Աննա
76 Բախալեան տիկ. Եղիսաբ.
77 Բախալեան Գէորգ
78 Դաւթեան Յովհաննէս
79 Զաբլիկեան տիկ. Աննա

*Աստրախան*

80 Մէլիքենցեան տիկ. Սիրան.
81 Ստեփանէ Խորէն եպիսկ.

*Գանձակ*

82 Նաբաթեան Մարտիրոս

*Գօրիս*

83 Եօլեան Աստուածատուր
84 Թումանեան իշխ. Գէորգ
85 Մելքումեան Հայրապետ
86 Մէլիք-Փարսադ. Բախշի բէգ
87 Շահնազարեան Արսէն
88 Պօղոսեան Եփրեմ
89 Սարգսեան Մկրտիչ
90 Տէր-Ղազարեան Համբարձ.

*Եկատերինօդար*

91 Զաքարեան Գէորգ քահ.
92 Լուսիկեան Սեդրակ
93 Լուսիկեան Տիրուհի
94 Կարինեան Յովսէփ
95 Մամիկոնեան Աւետիք
96 Նազարեան Մինայ
97 Շապշնիկեան Եղեա
98 Շապովալեան Արամ



99 Շապովալեան Միքայէլ
100 Շատուրեան Աստուածատ.
101 Զոլախեան Յարութիւն
102 Տէր-Խաչատրեան Արշակ
103 Տէր Մինասեան Մինաս

*Թէոդոսիա*

104 Քանանեան Յակոբ
105 Քէֆչեան Յակոբ

*Կաղզուան*

106 Ջանփոլադեան Ստեփան

*Կարս*

107 Ամիրխանեան Խաչատուր
108 Ապրէսեան Աբէլ
109 Բէգ-Յովսէփեան Թադէոս
110 Խօջաէյնաթեան Արշակ
111 Ղազարեան Ղազար
112 Յովսէփեան Աստուածատ.
113 Տէր-Յակոբեան Սմբատ

*Կզնուլ*

114 Ամիրզարեան Սահակ
115 Տէր-Մատթէոս. Խորէն. ք.

*Հաջամէթ*

116 Յովհաննիսեան Սարգիս
117 Պապովեան Կոնստանդին
118 ՍերեբրակեանԱղէքսանդր
119 Ստեփանեան Լեւոն

*Հառիճայ վանք*

120 Տէր Պօղոսեան Մարտ. ք.

*Հին-Ղրիմ*

121 Օհանեան Անտոն

*Ղզլար*

122 Ալէքսանեան Մելքօն
123 Աղաջանեան Գրիգոր
124 Աղաբալեան Կարապետ
125 Անանեան Կարապետ
126 Անանեան տիկ. Նունէ
127 Գասպարեան Մկրտիչ
128 Գօրգեան Բարսեղ
129 Դիլանեան Բարսեղ
130 Եագորեան Յովհաննէս
131 Եդիգարեան Յովհաննէս
132 Երուսաղէմեան տիկ. Եւա
133 Թուշմալեան Ստեփաննոս
134 Ղալթմազեան օր. Շուշ.
135 Ղուլիջանեան Յարութ.
136 Ղօրղանեան Խորէն քահ.
137 Մաժինեան տիկ. Շողակաթ
138 Մահտեսեան Յովհաննէս
139 Մանուկեան Վարդան
140 Մելքումեան Յարութիւն
141 Մեսրովբեան Կարապետ
142 Միշվելեան տիկ. Նունէ
143 Միրզեան Սարգիս
144 Մկրտումեան Գէորգ քահ.
145 Մոլտանեան Մկրտիչ
146 Մողնիեան Ադամ
147 Մուրադբէգեան Աղէքս.
148 Յարութիւնեան Յովհան.
149 Սողոմոնեան Ստեփանոս

150 Սվէշնիկեան Մինաս
151 Քալանթարեան Ոսկան
152 Ցիլեան Գէորգ

*Մեռվի*

153 Գալստեան Գալուստ
154 Տէր-Զաքարեան Մեսրովբ

*Մօզդոկ*

155 Թուշմալեան Միքայէլ

*Մոսկվա*

156 Աւետիսեան Բարսեղ
157 Բունեաթեան Բունեաթ
158 Եդիգարեան Սիմէօն
159 Լազարեան Մինաս
160 Մանուէլեան Աւետիս
161 Մուսինեան Յովհաննէս
162 Մուրադեան Մինաս
163 Ներսէսեան Աւետիք
164 Պօղոսեան Աւետիս
165 Վլասեան Գրիգոր

*Շամախի*

166 Միրզօյեան Ստեփան
167 Տէր-Սարգսեան Բալաբէգ

*Շիմանմուղ*

168 Սահակեան Մկրտիչ քահ.

*Շուշի*

169 Ժամհարեան Մարգարա
170 Իւզբաշեան Մովսէս
171 Իւզբաշեան Ստեփան-բէգ
172 Խնունցեան Մնացական
173 Ղալումեան Հայրապետ
174 Ճահիջանեան Աղէքսանդր
175 Տէր-Սարգսեան Միրզա
176 Օհանեան Արշակ

*Վարշավա*

177 Մխիթարեան Յովհաննէս

*Վլադիկավկազ*

178 Տէր-Յովհաննիսեան Ա.

*Ցաղնա*

179 Մովսիսեան Գրիգոր
180 Սաղաթէլեան Սաղաթէլ
181 Սարգսեան Դաւիթ

*Քութայիս*

182 Աստուածատր. Միքայէլ
183 Յարութիւնեան Սերովբէ

*Օդեսսա*

184 Աբրահամեան Յակովբ
185 Աւագեան Մկրտիչ
186 Ջօհրաբեան Եգոր
187 Մուրադեան Միքայէլ

---



## ՆԱԽԱՀԱՇԻՒ 1895 ԹՈՒԻ ՀԱՄԱՐ

### ՄՈՒՏՔ

| | |
|---|---|
| Մնացորդ առ 1 յունուարի 1895 թուի | |
| Յատուկ գումար. . . . | 65 ր. 40 կ. |
| Խաղարկ. տոմս 2 փոխ. $^{8798}/_{30}$ | 228 » 56 » |
| Պետ. Ազն. կալուած. բանկի | |
| Խաղարկ տոմս № $^{1075}/_{29}$ | 194 » 53 » |
| Առևտ. բանկ. ընթաց. հաշ. | 660 » 86 » |
| Պատրաստի դրամ . . . | 1000 » 68 » |
| | 2149 ր. 83 կ. |
| Անդամավճարներից . . . . . . . . . | 2200 » — » |
| Գրքերի վաճառումից . . . . . . . | 2200 » — » |
| Երեկոյթներից . . . . . . . . . | 800 » — » |
| Նուէրներից . . . . . . . . . . . | 150 ր. 17 կ. |
| Ընդամենը | 7500 [1]) ր. » |

### ԾԱԽՔ

| | | |
|---|---|---|
| Յատուկ գումար . . . . . . . . . | | 65 ր. 20 կ. |
| Գրքերի տպագրութեան . . . . . . . | | 6195 ր. 50 կ. |
| Գոյքի ապահովութեան . . . . . . . | | 81 ր. 30 կ. |
| Դիւանական ծախք | | |
| Գրասենեակի . . . . | 300 ր. | 1160 ր. |
| Գրասենեկապետի ռոճիկ | 360 ր. | |
| Փոստի և այլ ծախքեր | 500 ր. | |
| Ընդամենը | | 7500 ր. — |

---

[1]) Մուտքը՝ աւելացած դէպքում՝ ծախսւում է գրքերի տպագրութեան համար:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ

1, 1894 թուի մարտի 26-ի Ընդհանուր ժողովի արձանագրութեան ընթերցումը։

2, Վարչութեան և Խմբագրական Մասնաժողովի գործունէութեան տեղեկագրի ընթերցումը։

3, 1894 թուի դրամական հաշուի ընթերցումը։

4. 1895 թուի համար կազմած նախահաշուի քննութիւնը և հաստատութիւնը։

5, Պաշտօնատար անձերի ընտրութիւնը.

Ա. Վարչութեան [1]) Նախագահի
Փոխ նախագահի
Մի անդամի
Գրագահի

Բ. Խմբագրական Մասնաժողովի [2]) երեք անդամի

---

[1]) Վարչութիւնից դուրս են գալիս Ա. Քալանթար, Յ. Լօրիս-Մելիքեան, Ս. Յարութիւնեան և Գ. Շահումեան.

[2]) Խմբ. Մասնաժողովից դուրս են գալիս օր. Վ. Յակոբեան, պ.պ. Ս. Մալխասեան և տարուայ ընթացքում հեռացած Վ. Լունկեվիչ։

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0083204